«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ուսուցչի ստեղծագործական և հետազոտական հմտությունների կատարելագործումը բանահյուսական ժանրերի ուումնասիրման միջոցով
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Վարդիթեր Մանուկյան
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Իսահակյանի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....3

Գլուխ 1

1.1.Բանահյուսության ժանրերը.....5

1.2. Վիպական բանահյուսություն.....6

1.3. Հայ հին առասպելներ.....8

1.4. Էպոսը՝ ընդհանուր հատկանիշներով.....9

1.5. Հեքիաթներ.....11

1.6. Առակներ ու զվարճապատում զրույցներ..... 13

1.7. Ավանդություններ.....13

1.8. Հայոց ազգային ավանդություններ.....15

Գլուխ 2

Քնարական բանահյուսություն.....18

Եզրակացություն.....20

Օգտագործված գրականության ցանկ.....22

Ներածություն

Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է, նրա կոլեկտիվ բանականության արտացոլումը: Այն սկզբնավորվել է դեռ այն ժամանակ, երբ մարդիկ չէին ստեղծել տառերը: Բանահյուսությունն անընդհատ նորոգվել, թարմացել է, իր մեջ առնելով ժողովրդական լայն զանգվածների աշխարհընկալումը, դարավոր կենսափորձը, նրանց ըմբռնումներն ու իմաստությունները:

Ժողովրդական բանահյուսության մեջ պատկերված է ժողովրդի կյանքը, նրա աշխարհայացքը, բարոյագիտական հայացքների համակարգը, ժողովրդական փիլիսոփայությունը: Այն ունի ճանաչողական մեծ արժեք, հատկապես ժողովուրդների նախապատմական շրջանի կյանքի ժամանակահատվածն ընկալելու առումով: Ժողովրդական բանահյուսությունը միջազգային եզրույթով կոչվում է ֆոլկլոր:

Ժողովրդական բանահյուսությունն ունի մի շարք առանձնահատկություններ: Դրանց մեջ կարևոր են.

1. Կոլեկտիվ բնույթը,
2. Բանավոր բնույթ ունենալը,
3. Բազմապատում լինելը,
4. Որոշ հյուսվածքների միահյուսված լինելը,
5. Խորիմաստ բովանդակությունն ու գեղարվեստական կատարելությունը:

Բանավոր հյուսվածքի մեջ տեղի են ունենում շարունակական փոփոխություններ: Մենք չգիտենք, թե ինչպես են պատմվել հին վիպասքի հատվածները մինչև հինգերորդ դարը, դրանք անպայման ենթարկվել են և՛ բովանդակային, և՛ լեզվական փոփոխությունների: Ժամանակի ընթացքում բանավոր հյուսվածքը փոփոխվում է ամեն նոր կատարողի կողմից, որոշ դեպքեր, հերոսներ դուրս են թողնվում, որոշներն ավելացվում են: Հայտնի են օրորոցային նույն երգի փոփոխված տարբերակներ: Հիշենք, որ էպոսը մինչև գրի առնվելը պատմվել է շուրջ 150 պատումով: Բանագետները նկատել են, որ նույնիսկ նույն բանասացը նույն հյուսվածքը տարբեր ժամանակներում պատմելիս դրանում փոփոխություններ է կատարել:

Արդիականությունը: Աշխատանքն արդիական է, քանի որ բանահյուսության և գրականության միջև սերտ կապ կա: Գրականությունը բանայուսության գրավոր և հեղինակային

շարունակությունն է, որն աստիճանաբար ձևավորել է իր ինքնուրույն բնագավառներն ու տեսակները:

Գեղարվեստական գրականությունն իր յուրահատկություններով, իհարկե, տարբերվում է բանահյուսությունից. գեղարվեստական գրականության հիմքերը բանահյուսության մեջ են: Հետևաբար, բանահյուսության համակողմանի ուսումնասիրությունը կօգնի լավագույնս ընկալել այժմյան գրականության ավանդները:

Նպատակները՝

1. Բացահայտել բանահյուսական ժանրերի առանձնահատկությունները,
2. Կարևորել բանահյուսության դերը ազգային արժեհամակարգի պահպանման գործում:

Խնդիրներ՝

1. Ծանոթանալ ավանդված բանահյուսական բնագրերին ու նյութերին,
2. Վերլուծել ժանրային առանձնահատկությունները,
3. Համեմատել արդի գրականության մեջ եղած մշակված տարբերակների հետ:

Գլուխ 1

1.1 Բանահյուսության ժանրերը

Ներկայումս պահպանված բանահյուսությունը ավանդվել է բանավոր, հայոց լեզվի տարբեր բարբառներով վիպող ու երգող, ժողովրդի տարբեր խավերի, տարբեր սեռի ու տարիքի բանասացների կողմից, որոնք էլ բանահյուսության կենդանի կրողներն են, իսկ բնագրերը՝ նրանցից գրառված բանահյուսական նյութերը։

Բանահյուսության ժանրային համակարգը ձևով բաժանվում է 3 խմբի՝ արձակ-պատումային (հեքիաթ, առակ, ավանդություն, զրույց), չափածո–երգային (ժողովրդական վեպ, վիպական, ծիսական, քնարական երգեր), բանաձևային (առած, հանելուկ, երդում, անեծք, օրհնանք, հմայական աղոթք)։ Բանահյուսությունը իր բնույթով ու կիրառությամբ բաժանվում է մի քանի խմբի՝ ծիսահմայական, վիպական և այլն։

Ծիսահմայական բանահյուսություն: Այն հայ բանավոր ավանդության վաղնջական և կարևոր բաղադրիչներից է, ամփոփում է հետևյալ տեսակներն ու ենթատեսակները՝ անեծքներ, օրհնանք–մաղթանքներ, երդումներ, հմայական աղոթքներ, ծիսատոնական տարբեր բնույթի երգեր, խաղեր ու բանաձևեր։ Խումբն ունի կիրառական որոշակի նպատակ և նշանակություն՝ առնչված ժողովրդի ապրած բնական միջավայրի, տնտեսական, սոցիալ-կենցաղային կյանքի հետ, բարոյական ու կրոնապաշտամունքային ընկալումների տարբեր կողմերն ու երևույթները խորհրդանշող ծիսական ու հմայական արարողությունների հետ։ Բանահյուսական հիշյալ բոլոր տեսակները բնորոշվում են խոսքի հմայական ներգործության զորության հանդեպ հավատի առկայությամբ, ծիսահմայական արարողություններին ենթակա անձի, առարկայի կամ երևույթի տվյալ վիճակը փոխելու ցանկությամբ՝ արտահայտված հաճախ սիմվոլիկ–այլաբանական պատկերներով ու համեմատություններով։ Հմայական համեմատաբար պարզ բանաձևերից են անեծքները, օրհնանք-մաղթանքներն ու երդումները, որոնք ունեն լայն կիրառություն։ Գործածվում են նաև ծիսահմայական արարողությունների ժամանակ (ծննդյան, մահվան, հարսանիքի, ժողովրդական տարբեր հանդիսությունների, սեղանի, ողջույնի, հրաժեշտի, շնորհավորանքի, բարեմաղթությունների)։

Հմայական բարդ բանաձևերից են կապքի (կախարդական արգելքի հմայության) աղոթքները, որոնք, վիպական–նկարագրական սկզբնամասից բացի, բաղադրվում են անեծքի,

բարեմաղթության, երդման և սպառնալիքի բանաձևերից, ուղեկցվում են որոշակի արարողություններով, մեծ մասամբ ունեն պահպանական–ապահովական բնույթ, կիրառվում են չար ոգիներից հարուցվող զանազան ցավերից, հիվանդություններից (չար աչքի, գորտնուկի, ծննդկանին ու նորածնին սպառնացող թպղայի), ունեցվածքն ու անասուններին փորձանքից (գայլ ու գազանից, չարիքից) զերծ պահելու, չար ոգիների կախարդանքով կալած–կապված երևույթները (երաշտ, անբերրիություն, անքնություն և առհասարակ ամեն մի չար հմայություն) վերացնելու նպատակով:

Բանահյուսական նյութերի առատությամբ, կայունությամբ և ավանդականությամբ են հատկանշվում ամուսնության ու մահվան ծիսական արարողությունները: Հարսանեկան ու սգո երգերն իրենց ժողովրդական բնույթով վկայված են հնուց՝ հետագայում վերաիմաստավորման ենթարկված քրիստոնեական գաղափարներով:

1.2 Վիպական բանահյուսություն

Վիպական բանահյուսությունը ընդգրկում է զրույցները, վիպական–առասպելաբանական երգերը, ավանդությունները, վեպերը, հեքիաթները, առակներն ու երգիծական մանրապատումները, վիպապատմական երգերը:

Զրույցները հեթանոսական շրջանի վիպական ժանրի տարածված տեսակներից մեկն է եղել: Զրույցների բնույթի ու բովանդակության մասին պատկերացումները կազմվում են Խորենացու ակնարկներից: Զրույցի կառուցվածքի մասին հայտնի է միայն, որ նա իր պատմության մեջ զրույցները շարադրել է արձակ: Թեմատիկ առումով այն պետք է ունեցած լինի լայն ընդգրկում, սակայն մեզ են հասել միայն հայ ժողովրդի պատմական անցյալի հետ կապ ունեցողները և կոչվել են պատմական զրույցներ: Զրույցները ավանդվել են բանավոր ձևով և պատմվել միայն արձակ:

Առածները և ասացվածքները ժողովրդական կենդանի խոսակցական լեզվով հորինված բանահյուսական բանաձևային ասույթներ են, բաղկացած են առնվազն երկու բառից՝ որոշակի թեմա և իմաստ արտահայտող: Դրանք ժողովրդի դարավոր կենսափորձից բխող սեղմ ու պատկերավոր, իմաստալից ընդհանրացումներ են սոցիալական կյանքի, մարդկային բարքերի ու կենցաղի ամենաբազմազան երևույթների վերաբերյալ:

Առածը այլաբանական ստեղծագործություն է, որի բուն իմաստն արտահայտվում է անուղղակի, սիմվոլիկ–միջնորդավորված ձևով («Հավը կածի, ուրուրը կտանի»), մինչդեռ ասացվածքը իրականությունը դրսևորում է անմիջապես, ուղղակի («Օրենքը հարուստի համար է, պատիժը՝ աղքատի»)։ Առած–ասացվածքները հաճախ ծագում են առակներից, դառնում նրանց բարոյախրատական իմաստի բանաձևված ընդհանրացումը։

Հանելուկը հայ բանահյուսության և գրականության հնագույն տեսակներից է, գրական մշակմամբ վկայված է V և հետագա դարերից, արձակ, չափածո մեկ կամ մի քանի տողերից կազմված սեղմ բանաձև է, մեծ մասամբ՝ հարց։ Հորինվածքը բաղկացած է երկու միմյանց պայմանավորող մասերից՝ գուշակման ենթակա հանելուկի առարկայից և հանելուկի բանաձևից։ Խոր հնադարում ունեցել է լայն կիրառություն, իբրև մարդու մտավոր հասունությունն ու հնարամտությունը փորձելու, աշխարհաճանաչման միջոց, հետագայում վերածվել է մտավարժության, իսկ մեր օրերում՝ մանկական ժամանցի։ Հանելուկներում պահպանվել են վաղնջական շատ առասպելաբանական պատկերացումներ, տնտեսական, կենցաղային հնօրյա իրողությունների հիշատակներ, որով դրանք ձեռք են բերում պատմամշակութային կարևոր արժեք։

Հայ բանահյուսության բանաձևային կայուն տեսակների մեջ են մտնում հնչյունախաղերի վրա կառուցված շուտասելուկները, մանկական հանգավոր բառախաղ ասելուկները, խաղերգերը (հաճախ երկխոսական), փաղաքշանքի, սպառնալիքի, հիշոց–հայհոյանքի բանաձևերը և դարձվածքները։

1.3 Հայ հին առասպելներ

Հայ հին առասպելները ավանդվել են գրավոր, պատմական զրույցների, ավանդությունների և վիպական երգերի տեսքով։ Պահպանվել են նաև հին ու նոր ժողովրդական վեպերի, հեքիաթների, ավանդությունների, հանելուկների և երգերի մեջ։ Հնագույններն են Հայկի, Արամի, Արա Գեղեցիկի, Անգեղյա Տորքի, Արտավազդի, Վահագնի, Տիգրանի և Աժդահակի, Երվանդի և Երվազի, վիշապների և վիշապազունների մասին վիպվող զրույցներն ու երգերը, որոնց մեջ հին առասպելական կերպարները վիպականացել են, պատմականացել, դարձել հայ ցեղի նախնիներ,

արքաներ, արքայազուններ կամ նրանց օտար հակառակորդներ։ Հայկական հին առասպելները կառուցված են դասական առասպելաբանությանը յուրահատուկ երկհակադրության սկզբունքով, հակոտնյա կերպարների հակադրության և պայքարի վրա. դրական կամ բարի սկզբունքը մարմնավորում են յուրային հերոսները, բացասականը՝ օտար ու չար հակառակորդները։ Այդ հակադրությունն ու պայքարը ավարտվում է մեծ մասամբ յուրայինի՝ «բարու» հաղթանակով, օտարի՝ «չարի» պարտությամբ։

Հայկական ցեղի առասպելական նախնու՝ Հայկի վիպական պատմության ընդերքում ընկած է խավարն ու տիեզերական խառնաշփոթությունը խորհրդանշող բռնակալ Բելի դեմ աստեղային հերոս, առասպելական որսորդ, աղեղնավոր Հայկի մղած պայքարի առասպելը։ Հայկը դարձել է հայկական ցեղի, երկրի հիմնադիր, անվանատու նախնի, իսկ նրա հակառակորդ Բելը՝ հայրենի երկիրը խուժած բաբելոնացի բռնակալ։ Հայկը կռվով ելնում է Բելի դեմ, սպանում նրան, ապահովում իր ցեղի ու երկրի գոյատևումը։ Հայկը Օրիոն համաստեղության հայկական անվանումն է, Բելը՝ արևմտյան սեմական ցեղերի գերագույն աստծու։ Հայկական ցեղի երկրորդ անվանատու նախնին է Հայկի տոհմից սերված առասպելական Արամը (թերևս ծագած նախահայկական արիմ ցեղանունից)։ Մեռնող–հառնող երիտասարդ աստծու առասպելն է մարմնավորում Արա Գեղեցիկի և Շամիրամի պատմականացած զրույցը։

Վիշապների դեմ մղված ամպրոպային աստծու տիեզերական կռվի վաղնջական առասպելն իր տարբեր արտահայտություններն է գտել հայ հնագույն «Վիպասանք» կամ հատկապես՝ Տիգրանի և Աժդահակի, վիշապաքաղ Վահագնի, Արտավազդի և վիշապազունների մասին երգվող ու վիպվող դրվագներում։ Հայոց ամպրոպային աստված Վահագնը ծնվում է Երկնքի ու Երկրի և ծիրանի ծովի երկունքից, ծովում բոցավառվող եղեգնի փողից։ Ծնվելուն պես նա շտապում է տիեզերակործան վիշապների դեմ կռվելու։ Տիգրանի և Աժդահակի վիպական դրվագներում ամպրոպային աստվածը պատմականացել է, դարձել հայոց Տիգրան թագավոր, իսկ նրա հակառակորդ վիշապը՝ թշնամի Մարաստանի Աժդահակ (= վիշապ) թագավոր։ Վահագնը ևս պատմականանալով՝ դարձել է Տիգրանի երրորդ զավակը, իսկ մեկ այլ առասպելում՝ հայոց ազգի նախնի, որ գողանում է ասորեստանցիների նախնի Բարշամի հարդը՝ դրա հետքը ընդմիշտ դաջված թողնելով երկնքում (այստեղից էլ՝ «Հարդագողի ճանապարհ»)։

Ժայռում կամ ջրերում արգելափակված հերոսի առասպելաբանական սյուժեի տարբեր դրսևորումներն են Մասիսի վիհում Արտաշեսի որդի Արտավազդի կամ վերջինիս որդի Շիդարի, Դավթի որդի Փոքր Միհրի («Սասնա ծռեր» վեպում), ջրերի խորքում՝ Երվանդի՝ վիշապներից կամ քաջքերից բանտարկվելու վիպական հատվածները։ Սրբազան երկվորյակների վաղնջական պաշտամունքի և առասպելի տարբեր արտահայտություններ են Երվանդի և Երվազի, Սարասարի և Ադրամելիքի («Սասնա ծռերում»՝ Սանասարի և Բաղդասարի), Մտուկի և Կռնակի, Դեմետրի և Գիսանեի պատմականացած ու վիպականացած զրույցները։

Մի շարք առասպելներ պահպանվել են միայն բանավոր ավանդությամբ։ «Սասնա ծռեր» վեպում պահպանվել են հայոց երկնային լույսի և արեգակի աստված Միհրի անունը (Մեծ և Փոքր Միհր) և առասպելաբանական մոտիվները (Մեծ Միհրի առյուծ սպանելը, Փոքր Միհրի ժայռում փակվելը, առանձին տոների՝ նրա ժայռից դուրս գալը)։ Բազմաթիվ ավանդական զրույցներ կան Արևի և Լուսնի, Արևամանկան և Արևամոր, համաստեղությունների (Մեծ Արջ, Ծիր Կաթին), ջրի և հրի, թռչունների (արագիլ, ագռավ, կռունկ, աղավնի, ծիծեռնակ), կենդանիների, բույսերի ծագման, անձնավորման, անունների ստուգաբանության վերաբերյալ։

1.4 Էպոսը՝ ընդհանուր հատկանիշներով

«Սասնա ծռերը» ավելի քան տասը հարյուրամյակ ուղեկցում է մեր ժողովրդին։ 20-րդ դարում այդ հուշարձանը նորովի վերածնվեց։ 1000 տարի էպոսն ապրել է բանավոր, Սրվանձտյանի գրառումից հետո սկսվեց էպոսի կյանքի երկրորդ փուլը, երբ այն սերնդեսերունդ է անցնելու իբրև գիրք։ Բայց գիրք դարձած էլ այն պահպանելու է իր առանձնահատուկ տեղը հայ դպրության հարուստ ժառանգության մեջ։

Էպոսը պատմողական ստեղծագործություն է։ Այն տվյալ ժողովրդի պատմական զարգացման գեղարվեստական տարեգրությունն է, նրա ցանկությունների և սպասելիքների արտահայտությունը։ Էպոսը ներկայացնում է ժողովրդի կյանքի հերոսական էջերը, նրա դարավոր պայքարը արտաքին ու ներքին հարստահարիչների դեմ։ Էպոսը մի ողջ ժողովրդի ձայնն է, նրա աշխարհընկալումը, նրա էությունը։ Էպոսի բարձր անմրցելի հեղինակությունը պայմանավորված է նրա՝ համաժողովրդական, դարերի ընթացքում ստուգված փորձի արտացոլմամբ։

«Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր անհերքելի վկայությունն աշխարհի առջև»: Այս խոսքերն ասում է մի մարդ, ով այնքան լավ գիտեր և այնքան բարձր էր գնահատում մյուս ժողովուրդների էպոսները:

«Սասնա ծռեր» էպոսը բաղկացած է վիպական չորս հիմնական սերնդի մասին պատմող ճյուղերից, հերոսների ժառանգական հաջորդությամբ՝ պապից ծոռ (Սանասար և Բաղդասար, Մեծ Մհեր, Սասունցի Դավիթ, Փոքր Մհեր): Սկսվում է այդ տոհմի ծագումից ու Սասնա տան հիմնադրումից և ավարտվում տոհմի վերջին ներկայացուցիչ՝ անմահ ու անժառանգ Փոքր Մհերի ժայռում փակվելով: Բաղկացած է վիպական տարբեր շարքերից, բայց և նույն թեմաներից ու համանման սյուժեներից, դրանց մեջ միավորված բազմաթիվ ու բազմազան մոտիվներից: Առաջնային ու միավորիչ թեման, որ առկա է բոլոր ճյուղերում, հակադրությունն է օտար և հայրենի երկրների: Հաջորդ թեման՝ հերոսական ամուսնությունն է: Այս թեմաների վիպականացման մեջ մեծ տեղ է գրավում մարտերի նկարագրությունը՝ միշտ յուրային հերոսի հաղթանակով ավարտվող: Վերոհիշյալ թեմաներին են հարում հերոսների շինարարության և տոհմային զորեղ ժառանգ ունենալու ենթաթեմաները: Հնագույնն ու ելակետայինը հրաշածնունդ երկվորյակներ Սանասարի ու Բաղդասարի առասպելն է, հարակցված ու մշակված մ.թ.ա. VII դարից սերող Ասորեստանի Սինախերիբ (Սենեքերիմ) թագավորի հայրասպան որդիների փախուստի և Արարատյան երկիրը ապաստանելու պատմական ավանդության հետ: Տեղայնանալով՝ այն երկրորդ անգամ է պատմականացել, ենթարկվել միջնադարյան Բաղդադի արաբական խալիֆայության, մասամբ և Մսրա (Եգիպտոսի) էյուբյան մելիքների տիրապետության ժամանակների (VII-XIII դարերի) իրադարձությունների ազդեցությանը: Մեծ Մհերի, Դավթի և Փոքր Մհերի վիպական ճյուղերի նախահիմքում ընկած են խեթախուռիական ակունքներից սերող հնդեվրոպական ամպրոպային աստծու և հին հայոց երկնային լույսի ու արեգակնային աստված Միհրի առասպելները՝ հարակցված առաջին ճյուղի երկվորյակ եղբայրների վաղնջական առասպելին, վաղ միջնադարի և հատկապես VIII XIII դարերի պատմական կոնկրետ անցուդարձերի՝ արաբ, տարբեր բռնապետությունների դեմ ուղղված ժողովրդական ապստամբությունների (749 և 851), ըմբոստ ելույթների ազդեցությամբ խիստ փոխակերպված:

Էպոսի չորս սերնդից յուրաքանչյուրի կյանքի պատկերումով վեր է հանվում ամենից առաջ ազգային հալածանքների սաստկացումը, որն արտահայտվում է էպոսում պատկերված դաժան

հարկահանությամբ և կողոպուտով։ Էպոսը պատմում է, որ զավթիչները ոչ միայն դաժանորեն կողոպտել են հայ ժողովրդին, այլև գերեվարել են, տարել են նրան իր ոսկու ու անասունի հետ։

Մսրա Մելիքը, որի կերպարում խտացված են բոլոր ժամանակների հարստահարիչներն ու բռնակալները, չի հանդուրժում կյանքի և ստեղծագործական աշխատանքի և ոչ մի արտահայտություն ստրկացված Սասունում։ Հայ ժողովրդի ցասման օբյեկտը միայն օտար բռնակալությունը չէ։ Էպոսի գաղափարական բովանդակության կարևոր գծերից մեկն էլ այն է, որ նա բացառիկ ուժով պատկերում է նաև ներքին հարստահարիչների և առհասարակ չար աշխարհի դեմ ժողովրդի մղած պայքարը։

Էպոսում կարևորվում են աշխատանքն ու աշխատանքի մարդը։ Նրա յուրաքանչյուր տողից հորդում է աշխատավորի նկատմամբ տածած ջերմ սերը, ազատ ու խաղաղ աշխատանքի տեչը։ Դրական կերպարները զբաղված են խաղաղ, շինարար աշխատանքով, քաղաքների ու կամուրջների կառուցմամբ, վար ու ցանքով։ Էպոսի դրական հերոսները ջերմորեն սիրում են մայր հողն ու աշխատանքը։

Որոշակի պատմաշրջանի հավաստի դրոշմ կրելով հանդերձ՝ «Սասնա ծռերը» ներառել և իր մեջ գեղարվեստորեն համաձուլել է հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների նյութական ու հոգևոր կյանքի տարբեր իրողությունները, ժողովրդի աշխատավոր խավերի իղձերն ու ակնկալիքները։ Էպոսի գլխավոր պատգամը հայրենասիրությունն է։

1.5 Հեքիաթներ

Հեքիաթները հայ բանահյուսության հնագույն և բազմաքանակ տեսակներից են. որոշ սյուժեներ ու փոքրածավալ հեքիաթներ գրառվել են միջնադարում, իսկ հիմնականում՝ XIX դարի երկրորդ կեսից։ Բնույթով բաժանվում են երեք մեծ խմբի՝ հրաշապատում, իրապատում և կենդանական։ Կան նաև արկածային-նովելատիպ և կումիլյատիվ (շղթայաձև) հեքիաթների ենթախմբեր։

Հրաշապատում հեքիաթները սերել են վաղնջական առասպելներից և մեծ մասի սյուժեները հեքիաթների փոխարկված հնագույն առասպելներ են։ Իրենց ֆանտաստիկ բովանդակությամբ, միջավայրով ու կերպարներով դրանք սերտորեն կապված են Հայաստանի կոնկրետ

աշխարհագրական միջավայրի, ժողովրդի ապրած ֆեոդալական ժամանակաշրջանի սոցիալ-պատմական կյանքի երևույթների հետ:

Այս հեքիաթներում տեսնում ենք սարսափելի դևեր, վիշապներ, կախարդներ, թռչող գորգեր, չար վհուկներ, մարդիկ վերածվում են գազանների, թռչունների մեկնում անհայտ աշխարհներ, գլխավոր հերոսը շարունակ կռվում է չար ուժերի դեմ:

Իրապատում հեքիաթները ձևավորվել են ֆեոդալական հարաբերությունների իրական պատմական հիմքի վրա, արտացոլում են այդ հասարակարգին բնորոշ տնտեսական, սոցիալական, իրավական ու տնտեսական–կենցաղային կյանքի տարբեր կողմերն ու երևույթները: Մեծ մասամբ հագեցած են աշխատավոր մարդու հոգեբանությամբ ու իմաստնությամբ, գործող անձինք միմյանցից տարբերվում են աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, աշխատանքը նրանց փոխհարաբերությունների հիմնական շարժիչ ուժն է: Իրապատում հեքիաթներում ևս դրսևորվում են հրաշապատում մոտիվներ ու միջադեպեր, որոնք, սակայն, էապես չեն ազդում պատումի ընթացքի վրա և ենթակա են նրա ընդհանուր իրապատում տրամաբանությանը:

Հայկական հեքիաթների մեծագույն մասը, ունենալով իր միջազգային զուգահեռներն ու տարբերակները, միաժամանակ հատկանշվում է տեղական ազգային երանգով ու յուրահատկություններով:

Կենդանական հեքիաթները տարբերվում են հեքիաթների մյուս տեսակներից. դրանցում գործող հիմնական հերոսը անձնավորված կենդանին է: Այս հեքիաթներում ֆանտաստիկան հսկայական չափերի է հասնում: Կենդանական հեքիաթների վերաբերյալ հետաքրքիր դիտարկումներ ունեն Գրիմ եղբայրները: Նրանց կարծիքով կենդանական էպոսը ներկայացնում է մարդկության նախնիների խորապես բանաստեղծական անցյալը, երբ մարդը չափազանց մոտ էր կանգնած բնությանը, երբ նրա ամեն խոսքը բանաստեղծական արարման արդյունք էր:

1.6 Առակներ ու զվարճապատում զրույցներ

Առակներն ու զվարճապատում զրույցները հայ բանավոր արձակի հնագույն տեսակներից են: Առակները՝ կենդանիների, մասամբ նաև բույսերի մասին իրապատում զրույցներ են, գրառվել ու գրական մշակման են ենթարկվել միջնադարում, հատկապես XII դարի, Մխիթար Գոշի և

Վարդան Այգեկցու կողմից։ Դրանցում ուղղակի կամ խրատական այլաբանության ձևով արտացոլվել է միջնադարյան Հայաստանի սոցիալ-կենցաղային կյանքի, բարքերի պատկերը՝ իր տարբեր կողմերով ու հարաբերություններով։ Միջնադարյան առակների շատ նմուշներ, նույնությամբ կամ վերափոխված, ինչպես նաև բազմաթիվ նոր առակներ ու կենցաղային զրույցներ գրառվում են՝ սկսած XIX դարի երկրորդ կեսից։

1.7 Ավանդություններ

Ա. Ղանալանյանն իր «Ավանդապատում» աշխատության մեջ, անդրադառնալով ավանդությունների աղբյուրներին, գրում է «Ավանդությունների առաջին աղբյուրը բանայուսությունն է, մյուսը՝ Հայաստանում և հայաբնակ այլ վայրերում հրատարակված հայերեն պարբերականները։ Ժողովրդական ավանդությունների համար յուրահատուկ լրացուցիչ աղբյուր են հանդիսանում հայ հին և միջնադարյան, նոր և նորագույն շրջանի պատմիչների և գրողների գրվածքները»։

Ըստ Ղանալանյանի՝ ավանդությունների մեջ մարդու աշխարհաճանաչողությունը ունի ավելի գիտակցական ու իրականին մոտ բնույթ, և առաջնայինը ոչ թե աստվածներն են, այլ մարդիկ՝ բնության և հասարակական կյանքի հակադիր ուժերի դեմ մղած իրենց պայքարով, աշխատանքային գործունեությամբ և պատմական ճակատագրով։

Սակայն, ըստ Ղանալանյանի, հրաշապատում հեքիաթների հիմնական առանցքը կազմում է չարի պարտությունը և բարու հաղթանակը, որն իրականացվում է ժողովրդի երևակայության ուժով։ Նրանց բովանդակությունը, ինչպես պատմողների, այնպես էլ ունկնդիրների կողմից ընդունվում է մեծ վերապահությամբ, որովհետև այն չի համընկնում նոր ըմբռնումներին ու պատկերացումներին։ Հեքիաթների մեջ առաջնային դեր ունեն հեքիաթասացի ստեղծագործական հնարանքներն ու գեղարվեստական մտածողությունը։ Դրանք ունեն հարուստ սյուժե, բազմաթիվ կերպարներ, բարդ կառուցվածք։ Մինչդեռ ավանդությունների մեջ չարի և բարու հարաբերությունը շատ ավելի իրական դրսևորում ունի։ Նայած կյանքի հանգամանքներին և պատմական իրադրությանը, այստեղ մեկ հաղթում է «չարը», մեկ՝ «բարին»։ «Ավանդության բովանդակությանը հավատում են թե՛ պատմողները, իբրև կատարված դեպքերի ականատեսներ և ժամանակակիցներ, թե՛ ունկնդիրները՝ իբրև նրանց հետնորդներ ու ազգակիցներ։ Ավանդությունների մեջ

առաջնայինը պատմական, աշխարհագրական, քաղաքական, կրոնական այն տեղեկություններն են, որոնք հաղորդում է ավանդախոսն իր ունկնդիրներին» [6, էջ ԺԶ-ԺԷ]:

Ստեղծագործական հնարանքն այստեղ երկրորդական է՝ այդ տեղեկություններն ավելի լավ տեղ հասցնելու համար: Ավանդությունները խիստ կարճ պատումներ են, մեծ մասամբ առանց որոշակի սյուժեի, սահմանափակ թվով գործող անձերով և պարզ կառուցվածքով: Նրանք կապված են որոշակի առարկաների և անձանց հետ, գործողությունը կատարվում է պատմական և աշխարհագրական համապատասխան հողի վրա:

Կան ավանդություններ, որոնք, երկար ժամանակ բանավոր ձևով ապրելով, ժողովրդի լայն խավերում հետզհետե կորցրել են իրենց ժանրային նկարագիրը և վերածվել են ընդարձակ հեքիաթատիպ պատումների՝ ձեռք բերելով վերջինիս բնորոշ հատկանիշները: Կան ավանդություններ էլ, որոնք ժամանակի ընթացքում վերածվել են անեկդոտների: Դրանք՝ իրենց կատարած այս կամ այն արարքով, խելքով, սրամտությամբ, բթամտությամբ աչքի ընկած իրական պատմական դեմքերի մասին պատմված այն հուշապատումներն են, որոնք, բերնից բերան անցնելով, ենթարկվել են համապատասխան մշակման, հնարովի հավելումների ու չափազանցությունների՝ դարձել են յուրահատուկ երգիծական հորինվածքներ:

Ըստ Ա. Ղանալանյանի՝ ավանդությունների գլխավոր դերը ունկնդիրներին համապատասխան աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական և այլ տեղեկություններ հաղորդելն է: Ավանդություններ պատմողները հիմնականում հասարակ մարդիկ են, որոնց կարելի է հանդիպել հասարակության տարբեր խավերում: Ժողովրդական այդ ավանդախոսների մեջ հատկապես աչքի են ընկնում լավ հիշողություն և հարուստ կենսափորձ ունեցող տարեցները:

Ժողովրդական բանավոր ստեղծագործության մյուս ժանրերից ավանդությունները տարբերվում են նաև իրենց կառուցվածքով և ձևով: Եթե հեքիաթը, առակը վերջավորված և կայուն ձև ունեցող սյուժետային ստեղծագործություններ են, ապա ավանդությունները միշտ չէ, որ ունեն այդպիսի կայուն ձև և սյուժե: Նրանք որպես կանոն հանդես են գալիս որպես հանպատրաստից ասված հուշապատում: Ավանդապատումենրին հատուկ է առանց միջանկյալ նախադասությունների կարճ խոսքը:

Ավանդությունները նույն ժողովրդի մեջ ծնվում ու գոյատևում են՝ առանց հեղինակ-անհատի մասին որևէ հիշատակության:

1.8 Հայոց ազգային ավանդություններ

Դարերի խորքից եկող և սերնդից սերունդ փոխանցվող բյուրավոր ազգային ավանդությունների միջից հառնում է ինքը՝ հայ ժողովուրդը, իր հնամենի հավատալիքներով, զբաղմունքի առարկաներով, կենցաղային հարաբերություններով, հասարակական կյանքով, ստեղծագործ ու շինարար գոյակերպով, ազատ ու անկախ ապրելու կամքով, լուսավոր ապագայի վառ հավատով:

Ավանդությունները կարճ, արձակ, տեղեկատու բնույթի զրույցներ ու հուշապատումներ են՝ տեղային նշանակություն ունեցող դեպքերի ու դեմքերի, բնական ու մշակութային առարկաների, երևույթների մասին, իրական կամ հրաշապատում բովանդակությամբ: Բնույթով լինում են իրերի ու երևույթների ծագումը պատճառաբանող, անունները ստուգաբանող կամ էլ պատմական անձանց որևէ արարք վիպող զրույցներ: Ավանդություններին են հարում նաև սնահավատական զրույցները (կոչվել են նաև «բան»), ժողովրդական հավատալիքների հիման վրա ձևավորված մանրապատում–հուշապատումները (գերբնական էակների, ոգիների մասին) ընկալվում են իբրև եղելություններ՝ կատարված հաճախ զրույցը պատմող ականատեսի հետ:

Բնաշխարհ և հավատալիք

Հայկական ավանդությունների մեջ մեծ է տեղական բնաշխարհի և այդ բնաշխարհի հետ սերտորեն կապված ժողովրդական հավատալիքների տեղը:

Լեռների պաշտամունք: Ոգեղենացման և անձնավորման առարկա են դարձել, առաջին հերթին Հայաստանի բարձրաբերձ լեռները, որոնք իրենց վիթխարի զանգվածով, հրաբխային էությամբ, իբրև հայոց ուժի աղբյուրներ, կենդանի էակների պատրանք են ստեղծել բնության ուժից անտեղյակ մեր հեռավոր նախնիների պատկերացումներում: Մի դեպքում այդ լեռները ժողովրդին ներկայացել են իբրև երբեմնի հարազատ քույրեր, մի այլ դեպքում՝ իբրև նետաձիգ զորականներ, իբրև արյունակից եղբայրներ, որոնք այս կամ այն պատճառով պատժվելով, կորցրել են իրենց մարդկային բնույթը, կերպարանափոխվել լեռների:

«Թալինի շրջանում վերաբնակեցված սասունցի հայ գաղթականները ասում են, թե Մասիսն ու Արագածը ժամանակին շատ սիրով քույրեր են եղել: Պատահում է, որ նրանք մի օր կռվում են: Մեկն ասում է. «Ես եմ լավը և քեզանից էլ բարձր»: Այս միջոցին վրա է հասնում Մարութա սարը և փորձում հաշտեցնել քույրերին, բայց չի կարողանում: Ստիպված թողնում, հեռանում և անիծում է, որ Մասիսն ու Արագածը այնպես բաժանվեն, որ այլևս երբեք չհանդիպեն: Մասիսն էլ անիծում է Արագածին, որ ամբողջ տարին դարդը դուրս չգա նրա սրտից, և արտասուքն էլ չպակասի աչքերից: Արագածն իր հերթին անիծում է Մասսին, որ աշխարի երեսին մարդ չբարձրանա նրա կատարին, վրան մատաղ չմորթվի: Այդպես էլ լինում է. Արագածի կատարին արտասուքից լիճ է գոյանում, իսկ Մասսի վրա էլ միչև օրս մարդ չի բարձրացել, ոչ էլ մատաղ է մորթվել»[6, էջ ԽԴ]:

Քարերի պաշտամունք: Լեռների հետ հայ ժողովուրդը անձնավորել է նաև հայրենի քարերը, որոնցով իբրև հրաբխային երկիր հարուստ է Հայաստանը, և որոնք լեռներից պակաս կարևոր նշանակություն չեն ունեցել հայերի համար: Քարն օգտագործել են և՛ զենք պատրաստելու, և՛ շինարարության մեջ՝ իբրև մատչելի շինանյութ:

Ժողովրդական բազմաթիվ ավանդությունների մեջ Հայաստանի քարերը հանդես են գալիս իբրև բարի ու չար ոգիների յուրահատուկ անձնավորումներ: Նրանք չբեր կանանց զավակ, կաթ չունեցող ծննդկանին կաթ են պարգևում, Իբրև վիշապներ՝ սպառնալիքի տակ են պահում մարդկանց գոյությունը:

«Քաջարանի շրջանում, Խորխորի կապ կոչված վայրից վերև՝ ժայռե պատվանդանի վրա, կանգնած է մի կապույտ մեծ ցից քար՝ ոսկե երանգներով, որին տեղացիները Պտղաբեր քար են անվանում: Աստծուց խռոված չբեր կանայք իրենց պորտերը քսել են այդ քարին՝ նրանից պտուղ հուսալով» [6, էջ ԽԴ]:

Ջրի պաշտամունք: Հայկական բնաշխարհին և հավատալիքներին նվիրված ժողովրդական ավանդությունների մեջ ուժեղ են ջրի պաշտամունքի մասին արձագանքները: Հայտնի է, որ Հայաստանի շատ շրջաններ իրենց ցամաքային կլիմայի պատճառով միշտ տեղումների մեծ պակաս են զգացել: Ջրի պակաս զգացվել է թե՛ լեռներում (անասնապահություն), թե՛ նախալեռներում (երկրագործություն): Ջրից էր կախված մարդու գոյությունը: Այդ պատճառով վաղնջական ժամանակներից դարձել է Հայաստանի բնակչության հույսի, հուսահատության, ուրախության, վշտի, երազանքների ու կրոնական պաշտամունքի կարևորագույն առարկանորից

մեկը: Հայ ժողովուրդը բազմաթիվ ավանդություններ է ստեղծել իր լեռնային լճերի, գետերի, վտակների, առուների ու աղբյուրների մասին:

«Ասում են մի կույր աղջիկ եղբոր հետ ոչխար է արածեցրել Բյուրակնյան լեռներում: Մի օր էլ, երբ նա լվացվել է այստեղի բազմաթիվ աղբյուրներից մեկի ջրերով, աչքերը լուսավորվել են: Բազմաթիվ նման աղբյուրներից չկարողանալով գտնել բուժիչը, աղջիկն ասում է. «Ես ոնց իմանամ, թե որն էր այն ակը...»: Դրանից հետո լեռների անունը մնում է Բյուրակն» (Ըստ Ա. Ղանալանյանի):

Բույսերի պաշտամունք: Այս ավանդությունների մեջ առանձնապես ցայտուն է արտահայտված հայ ժողովրդի հնօրյա հավատալիքը, թե մարդ արարածին հատուկ է բույսի կամ կենդանու կերպարանափոխվելու կախարդական հատկությունը:

«Ուռենին առաջ մի երիտասարդ աղջիկ է եղել: Նա երկար սպասել է սիրած տղային, բայց տղան չի եկել: Աղջիկը կարոտից կռացել, ուռենի է դարձել: Մինչև հիմա էլ կանգնած է ջրի եզրին ու գլուխը կախ, լուռ հեկեկում է» [6, էջ էջ ԽԵ]:

Գլուխ 2

2.1 Քնարական/լիրիկական բանահյուսություն

Քնարական բանահյուսությունը բանաստեղծական–տաղաչափական համակարգով բաժանվում է երկու հիմնատիպի՝ հայրենների և խաղիկների

Հայրենները քնարական հնագույն երգատիպերից են, վկայված X դարից՝ իբրև ժողովրդական սգերգ (Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգության», բան ԻԶ)։ «Հայերեն» են կոչվել ազգային առանձնահատուկ տաղաչափության («հայրենի կարգաւ») համար։ Հայրենի չափով հորինվել են տարաբնույթ երգեր։ Ամենավաղ և ամենաշատ վկայվածն ու տարածվածը սիրո և ուրախության հայրեններն են, որոնք հորինվել են միջնադարյան քաղաքներում՝ գուսանների կողմից, կատարվել խնջույքների ժամանակ՝ թմբուկի, սրինգի, քնարի, փողի նվագակցությամբ։ XIII դարից սկսած հայրենները գրառվել ու մտել են միջնադարյան ձեռագիր տաղարանները՝ շարունակելով մնալ նաև ժողովրդական բանավոր երգարվեստում. XIX–XX դարերի բանահավաքները գրառել են «հարեն», «հերեն», ավելի հաճախ «անտունի» անվանումներով։

Խաղիկները, որոնց գրավոր անդրանիկ նմուշները հանդիպում են XVIII դարի ձեռագրերում, հայ ժողովրդական նոր քնարերգության և առհասարակ ժողովրդական երգարվեստի հիմնատիպն են, նոր ժամանակների վիպական, զինվորի, աշխատանքային, որոշ կարգի ծիսական (համբարձման վիճակահանության) երգերի, պարերգային ամբողջ բանահյուսության հիմքն ու տարերքը։ Դրանք իբրև առանձին երգատեսակ հիմնականում սիրերգեր են՝ հորինված գեղջուկ պատանիների ու աղջիկների կողմից. արտահայտում են նրանց սիրային պարզ զգացումները, զեղումները, ապրումները։

Օր՝ Վարդ եմ քաղել մաղերով
Վեր եմ դրել շաղերով.
Տեսնեմ՝ յարս գալիս է,
Առաջ գնամ տաղերով [8, էջ 271]։

Քնարական բանահյուսությունը իր բնույթով, կիրառությամբ ու թեմատիկայով ևս բաժանվում է մի քանի տեսակի՝ գեղջկական աշխատանքային երգեր, պանդխտության երգեր և այլն։

Գեղջկական աշխատանքային երգերը վիպաքնարական բնույթի ստեղծագործություններ են, ուղեկցել են դաշտային և առտնին աշխատանքային տարբեր պրոցեսների։ Հատկանշվում են գործիքների, բանող անասունների գովքով, աշխատավոր գյուղացու երազանքների իրագործման ձգտումով, սոցիալ–դասակարգային բնույթի բողոքներով։

Օր՝ Չուր ջան, ակոս արա՛,
Ցել արա՛, ակոս արա՛,
Ցամաք հացի կարոտ՝
Քուլփաթիս, դու ողորմա՛...[8, էջ 271]

Պանդխտության կամ ղարիբի երգերն առնչվում են միջնադարից սկսած հայ ազգային-սոցիալական կյանքին բնորոշ երևույթներից մեկի՝ պանդխտության հետ։ Այդ երգերին բնորոշ են օտարություն մեկնողի և նրա հարազատների հրաժեշտի, պանդուխտի կարոտի, տառապանքի, հիվանդության, մահվան, հայրենիքում հարազատների սպասումների, ինչպես նաև պանդուխտի վերադարձի ու դրա հետ կապված ուրախ ապրումների մոտիվները։

Օր՝ Էլեր եմ, կերթամ կը, վե՞վ գիտի հալս,
Մեմ ա Աստված գիտե դառնալս ու գալս.
Մարիկ, ձեռքըդ պագեմ, յար, մնաս բարով,
Ազրահիլ կամոքդ պաքմ տուր սիրով [8, էջ 258]։

Զինվորի երգերը հայ քնարական բանահյուսության համեմատաբար նոր տեսակներից են, կապված XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հայերին ցարական և թուրքական բանակ պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու իրողության հետ։ Հորինված են ավանդական երգերի (պանդխտության, հարսանեկան, հրաժեշտի, ողբի) ոճական ազդեցությամբ, ունեն երգային կայուն բանաձևեր ու կրկնակներ («Սալդաթ եմ, կերթամ», «Ասքյար եմ, կերթամ», «Վագոն, մի ժաժա»), համախմբված են որոշակի մոտիվների՝ զորակոչի վիճակահանության («Կանցիլարի դուռը», «Մտա եկեղեցին»), հրաժեշտի և ուղևորման («Գնալով գնացի, գյուղից հեռացա», «Մայրիկ ջան, քույրիկ ջան»), զորանոցային կյանքի անցուդարձերի, ռազմաճակատում զինվորի ապրումների, վիրավորվելու, գերվելու շուրջը («Հասանղալա», «Կերչի հողը», «Սև ծովի ափին, մայրիկ ջան», վերջին երկուսը՝ Հայրենական մեծ պատերազմի երգաշարից)։

Օր՝ Թագավորի թախտը Իմ ջահել վախտը:
Իմ յարիս բախտը, Ադե ջան, ադե,
Մեծ կռիվն ընկավ Դարդերս շատ է [8, էջ 301]:

Օրորոցային և մանկական երգերն ունեն համապատասխան, կրկնակներ, հորինված են թե՛ հայրենի և թե՛ բանահյուսական այլ չափերով: Ըստ կիրառության ու բնույթի՝ բաժանվում են մի քանի ենթատեսակների՝ օրորոցային կամ օրորի (հորինել և կատարել են կանայք), մանկախաղաց՝ մանուկներին խաղացնող երգեր (դանդանաներ, դարձյալ մեծ մասամբ կանանց կողմից կատարվող), մանկան լոգանքի ու քայլքի և զուտ մանկական երգեր՝ մանուկների համար և մանուկների կողմից կատարվող:

Օր՝ Թրռի թրռի թրռցնեմ,
Իմ լաճուն կաբա հագցընեմ,
Սև խավու միս կերցընեմ,
Կարմիր գինին խրմցընեմ... [8, էջ 311]

Մանկական քնարական երգերը հագեցած են վիպական և դրամատիկ տարրերով, նվիրված են բնության երևույթներին, երկնային լուսատուներին, թռչուններին, կենդանիներին և արտահայտված են մանկական լեզվով ու հոգեբանությամբ:

Եզրակացություն

Այսպիսով՝ հայ ժողովրդական բանայուսությունը, հանդես գալով տարբեր ժանրերով, պատկերում է հայ ժողովրդի անցած պատմական դժվարին ուղին, նրա կրած տառապանքները, բայց նաև՝ ապագայի հանդեպ անսահման լավատեսությունը: Ժողովուրդը, պատկերելով օտարների հարստահարությունները, ժողովրդի անասելի տառապանքը, հաճախ է իր հերոսներին օժտում գերբնական կարողություններով, ստեղծագործության հիմքում դնում է սպասվող հրաշքի գաղափարը: Զգտում է հավատալ և հավատացնել, որ դժվարին պահին Աստված մենակ չի թողնում արդար աշխատավորին և ազնիվ հավատացյալին:

Ուսումնասիրելով բանահյուսական ստեղծագործությունները, հատկապես ավանդությունները, առասպելներն ու ծիսական երգերը՝ նկատեցինք, որ դրանք ներառում են հայ ժողովրդի հնագույն հավատալիքների պատառիկներ, որոնք բանավոր կերպով սերնդեսերունդ ավանդվելով, որքան էլ ենթարկվել են փոփոխությունների, այնուամենայնիվ, պահպանել են նախամարդու միամիտ ու պարզ ըմբռնումները աշխարհի ու մարդու, բնականի ու գերբնականի վերաբերյալ: Իսկ էպոսը հայ ժողովրդի գոյաբանության բանաձևերի հանրագիտարանն է, որտեղ չարն ու բարին կողք կողքի են հանդես գալիս: Էպոսում անվերապահորեն նսեմացվում են չար գործերն ու դրանք կատարող բացասական կերպարները՝ ինչպես օտար, այնպես էլ յուրային: Այստեղ գովերգվում է արդար աշխատավորը, նրա՝ որպես հասարակության լիիրավ անդամի կարևորությունը: Գլխավոր հերոսները, ճիշտ է, կառավարում են Սասունը, բայց միշտ են հարգանքով վերաբերվում իրենց հպատակների հետ, քանի որ նրանք են հայրենիքը շենացնում: Սա, իհարկե, ազգային մտածելակերպ է եղել դարեր շարունակ և իր արտացոլումը գտել Էպոսում:

Բանահյուսությունը հայ ժողովրդի անկապտելի հարստությունն է. պատմական ժամանակահատվածում ինչքան էլ հեռանան բանահյուսությունն ու գրականությունը, միևնույնն է՝ նրանք սնվել և սնվում են միևնույն ակունքից՝ հայ ժողովրդի դարերի կենսափորձից և աստվածատուր ու ստեղծագործ ձիրքից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բեքմեզյան Ա., Միֆակիրառության բնույթը արդի հայ արձակում, ԵՊՀ հրատարահչություն, Երևան, 2007թ., 154 էջ:
2. Դոլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2008 թ., 265 էջ:
3. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1967թ., 494 էջ:
4. Եղիազարյան Ա., «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, «Անտարես», Երևան, 2013 թ., 326 էջ:
5. Ղանալանյան Ա. Տ., Առածանի, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն Երևան, 1960թ., 396 էջ:
6. Ղանալանյան Ա. Տ., Ավանդապատում, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան,1969 թ., 491 էջ:
7. Սարինյան Մ., Միֆոլոգիզմը 20-րդ դարի հայ արձակում, Երևան, «Ծիծեռնակ» հրատարակչություն, 2012 թ., 190 էջ:
8. Հատընտիր հայ ժողովրդական բանահյուսության, Հայպետհրատ, Երևան, 1956, 390 էջ: